

# ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ:  
Առանձին համարները 7 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».  
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ  
(բացի կիրակի և տօն օրերէից):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են  
խաբանչիւր բառին 2 կոպէկ:

ՆԵՐՎԱՅ 1889 ԹԻՒՆ

## „ՄՇԱԿ“

### ԴՐԱՎԱՆՆԵՐ ԵՒ ՔՆՂԱՔԱՆԵՐ ԼՐԱԳԻՐ

Հրատարակվում է Թիֆլիսում, նոյն ղերբով և նոյն սրբագրամայով: Մենք ստանում ենք սեփական ձեռնագրերը: Մեր գինը 10 ռուբլ է, վեց ամսվանը 6 ռուբլ:  
Գրվել «ՄՇԱԿ» կարելի է խմբագրատանը (Բարսեղյան և Բաղդասարյան փողոցների անկյունում Թամարյանի տանը):  
Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿ» գրվում համար պէտք է ղվում հետևեալ հասցեով. ТИФЛИСЪ, Редакция газеты «МШАКЪ», իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction du journal arménien «MSCHAK».

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՄԵՐՈՒՆԻ

#### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մի առաջարկութիւն. Նամակ իդրիւր. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կրկին Բուլանդէի մասին. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—ՀՆՈՒԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Բժշկի դրոյցներ.

#### ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

##### ՄԻ ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ

Անցեալ 1888 թվի վերջերին առիթ ունեցանք ճանապարհորդել թիւրքաց Հայաստանի մի մասում Թուրքիոյ մօտակայ ապաքային ճանապարհորդական նկատողութիւններէս տպելը, ես այժմ միայն մի հարցի մասին եմ ուզում խօսել, որովհետեւ նրա շուտ վճռելուց շատ բան է կախված:

Թիւրքաց-Հայաստանի դպրոցների դրութիւնը ողորմելից օղորմելի է: Նրանց թշուառ վիճակի գլխաւոր պայմանը այս է. կատարեալ բացակայութիւն կարգին վարժապետների: Թիւրքաց Հայաստանում վարժապետութեամբ պարապում են կամ ուրիշ պարապմունք չունեցողները,

կամ նոյն ողորմելի դպրոցներից աւարտածները, կամ Պոլսի մի ուրիշ:

Մենք կարող ենք աշխատել առ այժմ վերաց-նելու այդ անաշուղ պայմանը: Ամբողջ թիւրքաց Հայաստանում ոչ մի վարժապետանոց չկա: Նոյն իսկ գեղեցիկ ճառեր ասող պոլսեցիները մօտ դա մի շտապելով են համարվում և ոչ ոչ. Գ. Քալանթարեան, որին վարժապետանոցի համար պոլսեցիները խոստովանելով էին կերակրում, վերջը յուսահատվելով նրանցից հեռացաւ Տրապիզոն, ուր այժմ ազգային դպրոցների տեսուչ է: Նոյն իսկ եթէ լինէր էլ Պոլսում մի այդպիսի հիմնարկութիւն, այնու ամենայնիւ չէր կարող թիւրքահայաստանցիներին օգտակար լինել, որովհետեւ ոչ փափկատէր հօսոսն էր և ոչ նոյն իսկ դաւաճանները, Պոլսի կեանքին ընտելանալուց յետոյ, կը գնան Հայաստան վարժապետութիւն անելու: Սակայն էլ ինչ պահանջել աշխարհականներից, քանի որ մեր վարժապետները, որոնք աշխարհի փափկութիւններից և զուարճութիւններից հեռացած մարդիկ պէտք է լինէին, վիստում են Պոլսում, չը կամենալով գնալ Հայաստանի անխնամ վիճակները:

Իսկ Տրապիզոնը ունի բոլոր յարմարութիւնները մի վարժապետանոց ունենալու, որովհետեւ

#### ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

#### ԲԺՇԿԻ ԶՐՈՅՑՆԵՐԸ

Հասարակ թոյնը, օրինակ մկնդեղը կամ անդիկը, կազմուածքը մէջ մտնելով, իսկոյն ներդրածում է և տալիս է իր հետեանքները, եթէ կազմուածքը մէջ մի մակալ անդիկ կամ մկնդեղ է մտել, նոյն քանակութեամբ և մնում է կազմուածքի մէջ, տարափոխիկ հիւանդութիւնների թոյների նման չէ շատանում, այլ ընդհակառակէն կարելի է ասել որ քչանում է, որովհետեւ ինքն կազմուածքը փոխողութեամբ աշխատում է ազատվել թոյնաւոր նիւթից, վնասվում է կամ ազատվում նայելով թոյնի ջգիւնին և իր ժամանակին դործ գրված բժշկական օգնութեանը: Իսկ, կըրկնում եմ, տարափոխիկ հիւանդութիւնների վարակիչ թոյնը կազմուածքի մէջ աճում է և եթէ կազմուածքը արդէն վարակված է, ոչ մի բժշկական օգնութիւն վարակուածից ազատել չէ կարող, այլ հիւանդութիւնը պիտի ստանայ իր կանոնաւոր ընթացքը մինչև մարդու առողջանալը: Ուրեմն մենք պիտի ընդունենք, որ տարափոխիկ հիւանդութիւնների թոյնները, կազմուածքի մէջ բժշկական անուանում ենք, բակտէրիաներ—մի կրօքն են ր են, որոնք մարդու կազմուածքի մէջ բազմանալով, ընդունակութիւն ունեն իրանց խմբում:

- 1) Նա մօտ է քաղաքակրթւած երկրներին և հեշտութեամբ հաղորդակցութիւն ունի նրանց հետ, ուրեմն թէ ուսման պիտոյքները և թէ վարժապետական խումբը կարելի է լաւ կազմակերպել:
- 2) Մօտ է թիւրքաց Հայաստանին:
- 3) Տրապիզոնի հայոց դպրոցները ամենականոնաւոր են ամբողջ ասիական Թիւրքիայի հայ դպրոցներից: Տրապիզոնի հայ դպրոցները ունեն տղաների համար 7 բաժանմունք, աղջկաների՝ 6 բաժանմունք: Հարկաւոր է միայն մի քանի բաժանմունքներ աւելացնել, մի քանի լեռացուցիչ աւարկաներով և գիտութիւններով և կունենալինք մի վարժապետանոց:

Այս դործի համար շատ փող չէ հարկաւոր, տեղեակ մարդկանցից իմացանք, որ 1,200 ռուբլիով Դիարիքի և զուլս բերել դործը: Տրապիզոնի հայ դպրոցների տեսուչ՝ մանկավարժ պ. Գ. Քալանթարեան և ուսուցչական խումբը, որոնք պատշաճաւոր ուսում ստացած անձինք են, մեծ համակրանքով էին վերաբերվում այդ նպատակին: Որովհետեւ թիւրքաց Հայաստանում վարժապետութեամբ պարապում են միայն չքաւոր դասի զաւակները, ուստի այդ դոմարը գլխաւորապէս հարկաւոր է այդ պատանիներին, որոնք զաւրով Տրապիզոն վարժապետանոց մտնելու, առանց օգնութեան անել դրութեան մէջ կը գտնվէին, դիւրութիւններ տալու և օգնութիւն հասցնելու:

Եւ այս էլ պէտք է ի նկատի ունենալ, որ Տրապիզոնը այնքան մօտ է մեզ՝ կովկասցիներին, այնքան հեշտ է յարաբերութիւնը նրա հետ (Բաթումից Տրապիզոն կէս օրվայ ճանապարհ է), որ հեշտութեամբ կարելի է վերահսկել վարժապետանոցի թէ գործունէութեան և թէ տուած փողի հաշիւն:

Ահա մի վերին աստիճանի օգտակար գործ, որի իրականացումը ոչ մեծ զոհաբերութիւններ է պահանջում և ոչ մեծ զուարճեր մեր կողմից: Պոլսեցիներից պէտք է այս գործում ձեռք վերցնել, ինչպէս արդէն վերջերս են իրանք թիւրքաց Հայաստանից և անմիջապէս նպաստել գործի իրականացնելուն:

Լևոն Սարգսեանց

ՆԱՄԱԿ ԻԳՐԻՐԻՑ

Յունվարի 15-ին

Այստեղ ուրիշ տեղերի նման ցուրտ չէ այս տարի. մեղանում ամենացուրտ ժամանակն էլ ջերմաչափը—50°-ից չէ իջել, ուրեմն այդ կողմից Ստրմալուի ժողովուրդը բաղդաւոր է: Զինն աւելի սակաւ է, քան հարկաւոր է, այնպէս որ դիւղացիները երկիւղ են կրում, որ եթէ մի քանի անգամ պարբերաբար ձիւն չը գայ, գոցէ հացահատիկները ցրտահար լինեն: Դաշտերի երկայն ձիւն չէ մնացել, բոլորը հալվել է:

Ինչքան էլ որ եղանակն անոյշ է անցնում, այնու ամենայնիւ չունկոնների տունը մրսելու չափ ցուրտ է, տան անգամները կորեկի դառն ալիւրի հաց են ուտում, հազնելու չոր չունեն, փայտ չունեն որ տաքանան. աչքովս տեսայ թէ ինչպէս 10 տարեկան տղան, պատառուտած շորերով, տամնակ ծակեր ունեցող կոշիկները հագած՝ փողոցից մանր փայտի կտորներ, դարբիններ խանութի առջևից դէն ձգած ածուխի կտորներ ժողովում տանում էր տուն, որ տանեցիք նրանցով դոնէ կարողանային իրանց սառած ձեռք ու ոտը տաքացնել: Մի խումբով աղքատները ծանր ճգնաժամի մէջ են: Կան այնպիսի ընտանիքներ, որոնք մի քանի տարի առաջ ունեցել են կանոնաւոր ապրուստ, իսկ այժմ երկու տարի չարուակ կարկտահար արտերից ոչինչ չը ստանալով, յետին աղքատութեան են հասել: Այդպիսիները, ի հարկէ, չը կարողանալով օղորմութիւն խնդրել, մի կերպ անց են կացնում իրանց սև օրը:

Աղքատներին նեղ դրութիւնից հանելու համար մի քանի մարդկանց նախաձեռնութեամբ ստորագրութիւն է բացվել, որը դեռ չարուակվում է: Վաճառականութիւնը ընկած է. գիւղական հասարակութիւնը փող չունենալով չէ կարողանում վաճառականին արդիւնք տալ: Բամբակը, որը Ստրմալուի գլխաւոր արդիւնաբերութիւններից մէկն է և որը անցեալ տարի անսպասելի դնի բարձրացաւ, այսօր ընկած է: Անցեալ տարվայ 12 ռուբլանոց բամբակը այժմ մեր չարչի վաճառականները 7-ով են առնում: Շատերը

սում են, ջերմում է, որ մեծ մասամբ դողցըզով և քանի մի անգամ կրկնվող փսխումով է սկըսվում, հիւանդը յոգնածութիւն է զգում, նրա մարմնի անդամները կարծես թէ ծանրանում են, գլուխը ցաւում է, քնափոխութեան և խլութեան նշաններ են երևում, մարմնի ջերմութիւնը արագ բարձրանում է 39° կամ 40° Ցելսիուսի: Մի քանի ժամ առաջ բողբոլիւն առողջ մարդը կարծես թէ կրակի մէջ այրվում է, անկողին է մտնում, գանգատվում է ընդհանուր թուլութեամբ վրա, վատ է դրում իրան, մարմնի կարծես թէ ջարդվածի պէս է, լեզուն սպիտակ լորձով է ծածկված, անորթակը կորչում է, շատ հիւանդներ բզացաւ են դրում, որ կող տալու ժամանակ աւելանում է: Եթէ քիմքին նայենք, կը տեսնենք որ նշագեղձերը և լեզուակը սաստիկ կարմրած են. առաջին օրվայ երկուդին ջերմութեան աստիճանը 40°-ից էլ աւելի է լինում, զարկը արագանում է, կաշին չորանում է և սաստիկ տաք է լինում, երեսը և աչքերը կարմրում են, հիւանդը եթէ քոս է լինում, շատ նեղանում է և ցնոր բաւեր է արտասանում: Այսպիսի արագ սկսված նշանները ցոյց են տալիս, թէ մի ինչ որ ծանր սրընթաց հիւանդութիւն է սկսվում, բայց թուլեալ պարզ նշաններ դեռ չունենք: Այս երկուցիցներից մենք կարող ենք ենթադրել քուլթէշ հիւանդութիւնը միայն այն ժամանակ, եթէ քուլթէշ համաճարակ է տարածված հիւանդի ընտանիքում սկըսվում, դիւրում կամ քաղաքում, բայց և այնպէս այդ նշաններից կարելի է սպասել և մի այլ հիւանդութեան:

Այնքան այժմ քուլթէշ հիւանդութեան պատկերի նկարագրութեանը վարակված մարդը, ծածկված չըլանք անցնելուց յետ հիւանդանում է: Մարմնը տաքանում է, մարդս, ինչպէս ա-



ՎԱՐՇԱՎԱՑԻՑ մեզ գրում են, որ այդտեղի հայերը սկսեցին իրանց մէջ փոքր հանգանակել Բաֆֆի մահարձանի համար: Արդէն հաւաքված է 18 բուրձի և հանգանակութիւնը շարունակվում է:

Մեզ ուղարկված է հետեւեալ նկատողութիւնը, որը խնդրում են տպագրել մեր լրագրի էջերում. «Նորեքս հրատարակված «Մուրճ» ամսագիրը, մի փոքրիկ յօդուածով հրահանգներ տալով իր աշխատակիցներին ուղղագրութեան մասին, խօսում է և, ու. վ. տառերի գործածութեան մասին: Յայտնի է, որ մեր այժմեան լեզուի մէջ ռու. և վ. տառերի գործածութիւնը գլխաւորապէս կրաւորական բայերի մէջ շատ տարածւածութիւններ ունի: Եւ երբեք միայն չէ, որ միայն ամբողջ դրանք կանոններն են: Եւ համաձայնութիւն չէ կայացնել: «Մշակ» գործ է ածում «վ», զարբառին հետեւողները գործ են ածում «ու», կան և «ւ» գործածողներ: Նորեքս պ. Ղ. Աղայեան «Աղբիւր» մէջ այդ հարցի մասին բաւական երկար գրելով, աշխատում է միաձնութիւն մտցնել այն բոլոր բառերում, ուր լսվում է «վ» կամ «ւ» հնչիւնը, գործածելով թէ կրաւորական բայերում և թէ արմատական բառերում: Սխալ է թէ ուղիղ պ. Աղայեանի այդ քայլը—մեր խօսքը դրա մասին չէ: Մենք ուզում ենք միայն մատնանիլ անել այն տեղը արարել վրա, որը իրան թող է տուել նոր ծնած «Մուրճ» ամսագիրը: Մտցնելով համարեա թէ մի և նոյն քառագործութիւնը, ինչ որ առաջուց արդէն արել է պ. Աղայեան, նոր ամսագրի խմբագիրը տեւորող է համարում յիշել անդամ պ. Աղայեանի անունը, թէ և կողմնակի կերպով իր յօդուածում վիճում է և: Եւ «վ» գործածողները դէմ, և յոյս ունի հաւատարմանը ընթերցողներին, որ մի նորութիւն (լսւ թէ վատ, մի և նոյն է) է մտցնում: Դա գեղեցիկ բան չէ մի դեռ ևս նոր երևան եկող հրատարակութեան կողմից, որովհետեւ այդ տեսակ արարքը սովորաբար կոչվում է «գրական գողութիւն»: Անկասկած նոյն իսկ «Մուրճի» խմբագիրը հասկանում կը լինի թէ զորական դոգորութիւնը շատ տեղի բան է: Այդ տեսակ վայել քայլ անել՝ հէնց միմիայն «մի բան ան» սառ լինելու ցանկութիւնից» դրդված,—և անհերքելի և ծիծաղելի է»:

Տեղական ռուս լրագիրները հաղորդում են, որ հոստոսի Լորիս-Մելիքեան, տկար լինելով, պէտք է միայն երէկ ուղևորվել Կիւնից դէպի Վաղիկոյի, այնպէս որ այդ վերջին քաղաքը նա իր ընտանիքով կարող է հասնել միայն վաղը, կիրակի: Ուրեմն կոմսի թաղումը վաղը չի կայանայ:

Մեզ խնդրում են յայտնել, որ յունկարի 12-ին յօդուած թիւրքահայաստանցի կոյր վարժապետ Աթեանցի տուած թատրոնական ներկայացուածից մնացել է զուտ 19 բուրձի, որ և յանձնվել է վարժապետին:

Թիֆլիսի «Վարժական» փոխադարձ օգնութեան ընկերութեան» նիւթական միջոցները փոքր ինչ աւելցնելու նպատակով, փետրվարի 1-ին, չորեքշաբթի օր, քաղաքային թատրոնում պիտի տրվի մի կոնցերտ: Կոնցերտի ծրագիրը կազմված է վերին շատիճանի բազմակողմանի և հետաքրքիր կերպով: Կոնցերտին պիտի մասնակցեն ոչ թէ միայն տեղական օպերայի համարակա բոլոր ոյժերը, այլ և ուրիշ շատերը:

Բացի մեր լրագրի անցեալ համարներում յիշատակված քաղաքներից՝ կոմս Լորիս-Մելիքեանի դազալի վրա պսակ պէտք է դրվի նոյնպէս և Պետերբուրգի, Շուշու, Երևանի և Նոր-Բայազետի հայ հասարակութիւնների կողմից, որոնք և պիտի ունենան իրանց ներկայացուցիչները:

Սրանից մի քանի ժամանակ առաջ քաղաքային դումայի ռուսամարանական մասնաժողովը մշակել էր մի նախագիծ, որի նպատակն էր բանալ շինարարական կուրսը: Թիֆլիսի օրիորդական արհեստագիտական դպրոցին կից, այն օրիորդների համար, որոնք 18 տարեկանից փոքր չեն: Այժմ այդ նախագիծը, ինչպէս հաղորդում են տեղական ռուս լրագիրները, հաստատվել է և շուտով կը գործադրվի:

Այսօր, յունկարի 28-ին, ռուսաց դրամատիկական խումբը բանկի թատրոնում կը ներկայացնէ Կապուլեթտի «Բոյր թէրէզա» յայտնի դրաման, յօդուած Լազար Զանջուզիանցի աղքատ ընտանիքի: Որպէս յայտնի է մեր հասարակութեանը, պ. Զանջուզիանցի երբեմն հարուստ վաճառական է եղել և զանազան դժբաղդ հանգամանքներ պատճառով այժմ աղքատացել է: Մեր վաճառականների բարոյական պարտաւորութիւնն է կարողացածին չափ նիւթապէս օգնել պ. Զանջուզիանցի ընտանիքին, որով մասամբ թեթեւացրած կը լինեն այդ ընտանիքի նիւթական դրութիւնը:

Ձմեռութեան վերաբերութեամբ պետական խորհրդի մէջ մշակվող նոր կանոնադրութեան նախագիծը արդէն աւարտված է: Այդ նոր կանոնադրութիւնը, հաւանականաբար գործադրութեան մէջ կը մտնի հէնց այս տարվանից:

Բոաշիլէ եղբայրները Փարիզի ֆիրման մարտ ամսից պիտի բանայ Օրէսայում մի բաժանմունք, ամբողջ Ռուսաստանին նաւթ մատակարարելու համար:

Մեզ գրում են ԿԱՐՍԻՑ, որ մի քանի հայ թատրոնատէրներ ղեկավարութիւն ունեն բարեկեան օրերին մի ներկայացում տալ Սարիղա-միշում: Կը խաղան «Արշակ II» ողբերգութիւնը: Ներկայացումը կը լինի Սարիղա-միշի ծխական ուսումնարանի օգտին:

ԲԱԳԻՆԻՑ մեզ գրում են, որ այդտեղի հայաւետարանականները շատ անտարբեր են դէպի հասարակական կեանքը և հասարակական հարցերը: Նրանցից ամեն մէկը աշխատում է ապրել իր ընտանիքի կեանքով, ամենին ուշադրութիւն չը դարձնելով հասարակաց այլ և այլ կարիքների վրա և իրան հեռու պահելով և կեղեցական և ուսումնարանական բոլոր գործերից:

ՇՈՒՇՈՒՑ մեզ գրում են յունկարի 22-ից հետեւալը. «Մեր կողմերի գիւղացիների համար մի բժիշկ կայ նշանակված, որը պէտք է պատէ գիւղերը: Այդ բժիշկը ապրում է Շուշում: Այս րոպէս չը շրջակայ գիւղերում տիֆ և քուշ է չհիւանդութիւնները բաւական զոհեր են տանում: Ժամկէտները, մասնաւոր չափով գիւղում, որի ընկերները սարսափահար եղած, մարդիկ ուղարկեցին Շուշի, խնդրելով որ վերջապէս բժիշկը բարեհաճէ այցելել իրանց գիւղը»:

ՇՈՒՇՈՒՑ մեզ գրում են, որ Ա. տղանունով երկու եղբայրներ, միմեանց ետից մեռնելով՝ դահաւան հիմնարկութիւններին կտակել են 3,000 ռ:

Ինչպէս մեզ գրում են, այժմ կատարեալ դարձանային եղանակ է տիրում Շուշում: Մի շարքով է, որ երկինքը բոլորովին պարզ է և օդը բաւական տաք է:

ԵՐԵՒԱՆԻՑ մեզ գրում են: «Յունկարի 18-ին, ժամի 6-ին, երեկոյեան, երբ դեռ ևս խանութներն մեծ մասը բաց էին, մի թուրք դուրս է կանչում մի դերձակի երիտասարդ բանուրին և հէնց որ սա ոտք է կոխում փողոցի վրա, թուրքը անմիջապէս խրում է իր դաշոյնը երիտասարդի կուրծքը: Երիտասարդը գետին է ընկնում և մեռնում է: Գերձակի խանութը դռնվում է պօլիցիային կից: Թուրքը ձերբակալված է»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿՐԿԻՆ ԲՈՒԼԱՆԺԷՒ ՄԱՍԻՆ

Գեներալ Բուլանժէ ընտրվեցաւ Փարիզի պատգամաւոր: Փառաւոր գեներալը այդպիսով նոր յաղթանակ տարաւ... և այդ յաղթանակը այսօր անկախազորելի ցնծութիւն է պատճառել թէ իրան գեներալին, և թէ նրա կողմնակիցներին... Աւելի քան հազար ձայների առաւելութեամբ ընտրված Բուլանժէ, որը այդպիսով յաղթեց իր հակառակորդներին՝ հանրապետական կանդիդատ պ. Ժակին: Ի հարկէ մի րոպէ պէտք է շփոթի մէջ գցել հանրապետական կառավարութեան ներկայացուցիչներին, և մեզ համար միանգամայն հասկանալի է այն իրարանցումը, որը տեղի է ունեցել Փարիզում այդ գեներալի ընտրութեան առաջին րոպէներին...

Բայց այդ իրարանցումը արդէն անցել է: Փարիզի կառավարական շրջաններում տիրում է այժմ աւելի սառնասրտութիւն, և հանրապետականները կրկին անգամ համոզվում են, որ եթէ Բուլանժէ ընտրվեցաւ, դրա մէջ մեղաւորը հէնց իրանք են:

—Ինչպէս... գուցէ կը հարցնեն ընթերցողները: —Ահա թէ ինչպէս: Ժակը արմատականների կանդիդատն էր. չափաւոր հանրապետականները, որոնք չէին կամենայ ի հարկէ ձայն տալ Բուլանժէին համար, ձայն չը տուեցին: Ժակին Այդպիսով Բուլանժէի հակառակորդները երկու մասի բաժանվեցան, և հէնց այդ երկու մասի բաժանվելը մեծացրեց Բուլանժէի ընտրութեան յոյսը, և ոչ թէ միայն մեծացրեց, այլ և հիմը դարձաւ Բուլանժէի համար տուած ձայների առաւելութեան, և այդպիսով էլ գեներալը ընտրվեցաւ...

Մենք գրանով չենք կամենում ասել, որ գեներալ Բուլանժէ քիչ ժողովրդականութիւն ունի, ոչ, նա ստացել է 244,070 ձայն, և դա այնպիսի մի մեծ թիւ է, որ ապագայում է, թէ գեներալի կողմնակիցները բաւական բազմութիւն են...

Այդ կողմնակիցները այն տեսակ մարդիկ են, որոնք Ֆրանսիայի այժմեան կառավարութիւնը համարում են անընդունակ, որոնք նոյնպէս կամենում են լուծել տալ պարլամենտը, որոնց բաւական զղուեցրել է այժմեան քաղաքական կուսակցութիւնների անվերջանալի մրցումները և կոռււքները, և որոնք երեսակայում են,—անմիտ երեսակայութիւն,—թէ մի որ և է փառամոլ դիվտատարի երևան գալը երջանկութեան ճանապարհ բաց կանէ... ինչ կասե՛ք որ դա ժողովրդի այն մասն է, որը բոլորովին մոռացել է Ֆրանսիայի մօտիկ անցեալը, և չէ յիշում, թէ Ֆրանսիան որքան արիւն է թափել փառամոլ դիվտատորներից աղաւթիւն համար...:

Անպայման ուրախալի է, ի հարկէ, որ Բուլանժէի կողմնակիցները չեն կազմում հասարակութեան ինտելիգենտ մասը, այլ դրանք ժողովրդի այն մասերից են կազմված, որոնք իրանց տղի տուրքներ և անկիրթ լինելու պատճառով անընդունակ են գիտակցաբար ընել գործերը, որոնք անընդունակ են հասկանալու, որ երկրը իր յոյսը պէտք է դնի քաղաքական կազմակերպութեան աստիճանաբար և հիմնաւորապէս զարգանալու վրա, և ոչ թէ պատահական կերպով դուրս պըրծած բաղդախնդիրների վրա, որոնք տգէտ ամբողջ աշխարհ փրկել են երեւում...

Ահա այդ գիտակցական հասկացողութիւնն է հարկաւոր ֆրանսիական ազգի այն մասին, որը օւղիցաններ է անում Բուլանժէին և դրա նմաններին, և երբ այդ գիտակցական հասկացողութիւնը կը տիրապէսէ ամբողջ ազգի մէջ, այն ժամանակ, ի հարկէ, երբեք երևան չեն գայ ամբողջ ժողովրդի պատուի և իրաւունքների հետ խաղացող արկածախնդիրները:

Իսկ մինչև այդ գիտակցական հասկացողութեան երևան գալը ժողովուրդները մէջ, քաղաքական կեանքի երկուքներին հետեւող և արձանադրող տարված պէտք է լինի պարբերաբար գրել վերցնել և գրել այնպիսի մարդկանց մասին, ինչպիսին է Բուլանժէ, կապելով դրանց անունը մի ամբողջ երկրի կեանքին հետ, քաղաքակրթված մի պետութեան քաղաքական զարգացման հետ...

Այդ, խոստովանում ենք, շատ էլ զուրկական նիւթ չէ գրողի համար, և մենք մի առանձին դժգոհութեամբ և կոտորված սրտով ենք խօսում Բուլանժէի վրա, մինչդեռ մենք հիմը ունենք սպասելու, որ Ֆրանսիան աւելի միևնույն կարգի և աւելի կենդանացուցիչ նիւթ կը տար ամբողջ աշխարհի մամուլի և զրականութեան համար...

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒԻՐԵ

—Վիլհելմայից եկած տեղեկութիւնները բացառապէս Բուլանժէի անձնաստիճաններն են վերաբերում: Աւստրիական մայրաքաղաքի ազգաբնակչութիւնը միայն այդ դժբաղդ դէպքում է հետաքրքրվում, և ժողովրդի մէջ խորհրդաւոր լուրեր են պտտում թագաւորական մահի մասին: «Neue Freie Presse» լրագիրը ձերբակալվեց մի նկատողութեան համար, որ նա տպագրել էր թագաւորական մահի մասին վերաբերմամբ: Վիլհելմայի ամբողջ լրագրութիւնը այն կարծիքն է յայտնում, որ թագաւորական մահը մի մեծ կորուստ է միջին դասակարգի և մամուլի համար, որոնք այդպիսով զրկվում են մի զօրեղ հովանաւորից: Թէ Վիլհելմայում և թէ Լուստրիական շատ

քաղաքներում թատրոնները և զուարճութեան բոլոր տեղերը փակված են:

—Փարիզից հեռագրում են, որ այնտեղի մամուլը խորին ցաւակցութիւն է յայտնում Բուլանժէի մահի մասին, մատնանիլ անելով նրա բարեկամական տրամադրութիւնը դէպի հանրապետական Ֆրանսիան:

—Ընդունելով ծայրահեղ ձախկողմաններին մի քանի ներկայացուցիչներին, մինիստր նախագահ Ֆլոկէ ասեց, որ ինքը մտադիր էր հրաժարական տալ, բայց ի նկատի ունենալով իր հակառակորդների ինտելեկտները, վճռել է մնալ իր պաշտօնում, և պիտի պահանջէ, որ պատգամաւորների ժողովը վստահութիւն արտայայտի միևնույն թեմանը:

—Գեներալական մի քանի լրագիրներ խօսելով Բուլանժէի ընտրութեան մասին, այն կարծիքն են յայտնում, թէ դա ապագայ է, որ հանրապետութեանը սպառնում է մեծ վտանգ: Դա գերմանական լրագիրների հին երգն է:

—Պեշտից հեռագրում են, որ Բուլանժէի մահի մասին ազդեցողութեան տակ, այնտեղի քաղաքական բնաւորութիւն ունեցող շարժումները և գիւղերական օրինագծի առիթով տեղի ունեցող ցոյցերը համարեա թէ դադարեցան: Հանդուցեալը այնքան մեծ ժողովրդականութիւն ունէր պետութեան բազմակողմ ազդերի մէջ, որ նրա մահը առայժմ ամեն բան մոռացնել է տուել:

—Կ. Պոլսի լրագիրներում կարդում ենք թիւրքաց տպագրական տեսչութեան հետեւեալ կարգադրութիւնը: «Տպագրական տեսչութիւնը, նկատելով որ հայերէն «Մանգուլի» լրագիրները, հակառակ տեսչութեան պատուէրներին համարձակած են կարգ մը յօդուածներ հրատարակել ընդդէմ հայ ու կաթոլիկ կրօններու, միամտեալ դադարման կը դատապարտէ այդ երկու լրագիրները»:

ԻՍԱՌԵՆ ԼՈՒԻՐԵ

Երեկ Նորոթիւն... ուրախալի նորութիւն... —Ինչ է, ինչ. Բուլանժէն յաղթվել է: —Ոչ. —Գուցէ Բիսմարկն է փոխել իր ուղղութիւնը. —Ոչ. ոչ. —Ապա ինչ է. —Ահա թէ ինչ.—տուրքիւրը մօղայից դուրս է գալիս: Փարիզում արդէն շատ կանայք առանց տուրքերի են ման դալիս, և այդ նոր մօղան հասել է Բերլին, Վիլնա, Պետերբուրգ և մինչև իսկ Թիֆլիս: Եւ Թիֆլիսում արդէն մի խումբ կանայք նոր մօղային հետեւելով՝ տուրքեր չեն հագնում...:

Յայտնի իրողութիւն է, որ աւստրիական թագաւորական հանդուցեալ Բուլանժէի բոլորովին չէր սիրում Բերլինը, միշտ խոյս էր տալիս Գերմանիայի մայրաքաղաքից, ուր տիրապետում է ինչ-իսկ Բիսմարկ: Անձնականապէս Բուլանժէի յարաբերութիւնները բարեկամական չէին և գերմանացիներին այժմեան կայսր Վիլհելմին հետ: Դրանց յարաբերութիւնը աւելի սառն դարձաւ մասնաւոր այն օրից, երբ Վիլհելմ կայսրը, նորեքս ստանալով հանդուցեալ Բուլանժէի զրական աշխատութիւններից մէկը, ասեց՝ «գրական աշխատութիւնը,—թագաւորական մարդու գործ չէ...»:

Հիւսիսային Ամերիկայի Միացեալ-Նահանգներում այժմ կայ 116 բժշկական դպրոց:

Վալինգտոնում նորեքս մի օրինագիծ է կազմվել, որի զօրութեամբ պիտի ազդելի գրքերի ներմուծելը Անգլիայից: Այդ օրէնքը ուղղած է յատկապէս անգլիական հրատարակիչների դէմ, որոնք յայտնի են իրանց հարստահարող յատկութիւններով: Իրանք Անգլիայի հեղինակները իրաւունք ունեն իրանց գրքերը Ամերիկա ուղարկելու:

Վիլհելմ կայսրը նորեքս յանդիմանել է Բերլինի համալսարանի ուսանողներին՝ այն պատճառով, որ նրանք շատ յաճախ են միմեանարտում, ապացուցանելով դրանով, որ իրանց մէջ շատ թուլացել է կրօնական զգացմունքը:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՍՏՈՐԻԱԳՐԻ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆՑ

ՊԵՏԵՐԲՈՒՐԿԻ, 25 յունկարի: Երէկ կաթոլիկ եկեղեցում միտրօպոլիտ Գլինտօլտ հոգեւանդատ կատարեց էրցհէրցոգ Բուլանժէի համար, հոգեւանդատին ներկայ էին Մեծ Խչիանները, միևնույնները և ուրիշ աստիճանաւորներ, աւստրիական զենպանտառն պաշտօնեաները և զիպլոմատիական խմբի անդամները:

10հոկտեմբեր, 25 յունվարի: Պարսկերէն գործի վերաբերեալ յանձնաժողովի այսօրվայ նիստում, մի ամբողջական ֆինանս, օմն լեկարու, յայտնեց, թէ Պարսկէն ասել է իրան, որ ինքը իրականում ինքնավարութիւնն է կամենում, և որովհետեւ այդ նպատակին ուրիշ կերպ չէ կարելի հասնել, եթէ ոչ ուժով, ուստի ինքը խորհուրդ է տալիս դիմել ապստամբութեան, երբ դրա համար հարկաւոր մարդիկ և զրամական միջոցներ պատրաստ կը լինեն:

Վիեննա, 25 յունվարի: Հանգուցեալ թագաժառանգի թաղում, որոշած հանդիսակատարութեան համաձայն, տեղի ունեցաւ կէսօրից յետոյ ժամը 4-ին: Եղանակաւորութեան հանդիսի առաջիկայում էր հեծելազորը, իսկ սգաւոր դիակառքի երկու կողմից գնում էին լէյք-գվարդեան խումբը, պաժերը և պալատական պաշտօնականները: Թագամանը ներկայ էին՝ գաւառական զօրքերի բոլոր հրամանատարները, գեներալները, պետական աստիճանաւորները, արխիտոկրատիայի ներկայացուցիչները, բոլոր օտար գեսպանները, նոյնպէս և պրուսական ու բաւարական պատգամաւորութիւնները՝ իրանց առաջնորդ ունենալով Մեյզլինգերի արկնքին: Եկեղեցումն էին կայսր Ֆրանց-Յոսէփի, արքայազնները, զբարը և արկնքները: Ժամեցողութիւնը վերջանալուց յետոյ, դադարը տարան դամբարանը իշխան Լոհենշտեյն, կոմս Մոմբէլ և հանգուցեալ էրցհերցոգի թիկնապաշտները: Գազադի բանալիները տըր-վեցան եկեղեցու արքայազնը՝ պաշտօնակա համար:

Վիեննա, 25 յունվարի: Երբ հանգուցեալ թագաժառանգը Բուդապէս մարմինը դամբարանի մէջ օրհնակեցաւ, կայսրը ծնկաչափ և լաց լինելով համբուրեց դադարի ծածկը: Էրցհերցոգ Բուդապէսի այրի ամուսինը՝ մինչև իր աղջկայ մարդու գնալը՝ կողովի 4,000,000 գոլդենի տոկոսով, իսկ աղջկայ մարդու գնալուց յետոյ՝ 2,000,000 գոլդենի տոկոսով: «Neue Freie Presse» լրագիրը մատնանի է անում Ռուսաստանի և Գերմանիայի միմեանց մտենալու հանգամանքի վրա, որի հետևանքը կը լինի Աւստրիայի և Ռուսաստանի յարաբերութիւնների անելի լաւանալը:

10հոկտեմբեր, 25 յունվարի: Չինկիլնդում տեղի տուեցան ծանր խառնակութիւններ: Աղքատականութիւնը կրակ տուեց բրիտանական հիւպատոսարանը և օտարերկրացիներին սպառնալու անհրաժեշտ: Այդ անցքի տեղը ուղարկեցաւ բրիտանական պատերազմական նաւ:

Պետերբուրգ, 26 յունվարի: Յունվարի 24-ին խորհրդակցութեան ժամանակ, ներքին գործերի, ժողովրդական լուսաւորութեան, արդարադատութեան մինիստրները և սուրբ սինօդի աւագ-պրօկուրորը վճռեցին բոլորովին դադարեցնել «Сибирская Газета» լրագրի հրատարակութիւնը: «Гражданин» լրագիրը լսել է, որ կայսերական հրապարակող Գրիգոր Արմոնիտ

րական գնացքի խորտակման գործի դատը տեղի կունենայ Պետերբուրգում, որ մեղադրվողները թուումն է և բարձր Շերնովալ, և որ այդ գործը կը քննվի սենատի առանձին առանձնում: Նոյն լրագիրը այսօր հերքում է իր երէկ հաղորդած լուրը՝ կոմս Տոյստոյի հրաժարականի մասին: «С. Петерб. Вѣд.» լրագիրը լսել է, որ ներքին գործերի մինիստրի նախագիծը՝ ղեկավարների զլխաւորների վերաբերմամբ՝ վերջնական հաստատութիւնն է ստացել:

Հոմ, 27 յունվարի: Կարդինալ Լէոօփոլփի վախճանվեց:

Վիեննա, 27 յունվարի: Հանգուցեալ թագաժառանգի Բուդապէսի Սէզլին կոմսին զրած նամակը, որ տպագրւած էր «Nemzet» լրագրում, այստեղի քաղաքական չրֆաններում կեղծ է համարուում: Լուր է տարածվել, որ էրցհերցոգուհի Ստեֆանիա մտադրութիւն ունի բնակութիւն հաստատելու համար փոխադրվել Պարագուայ, որ հարսանիքից մի փոքր յետոյ նա իր կենսիկ ամենապաշտելի օրերն է անցկացրել: Մէլերին գնան ամբողջ այն սենեակը, ուր վախճանվեց թագաժառանգը Բուդապէս, մատուց պէտք է դարձնեն: Սէզլան հետեակ գնդի գնդապետ Բոմբոլ, որի չէֆն էր հանգուցեալ Բուդապէսի թագաժառանգը, ունկնդրութեան ընդունվեց Ֆրանց-Յոսէփ կայսրի և էրցհերցոգ Ալբրէխտի մօտ, ներկայ էր հոգեհանգուցի պալատական եկեղեցում և սյակի դրեց գերեզմանի վրա:

ՓԱՐԻՉ, 27 յունվարի: Ֆրանսիական բանկը իջեցրեց դրակոնտը 31/2-ից մինչև 3/0:

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

ՆԵՐՔԻՆ-ԱՌՏԱ. Գ. Ս. Ուղարկեցինք ձեզ Գր. Արմոնիտ «Жон. Пол. Турец. Арм.» բրօշուրը:

ԹԻՖԼԻՍ. Ս. Ա. Բ. Ձեր փոքրիկ յղուածը հայ գիւղական համայնքի մասին բաւական հետաքրքիր է: Բայց բարեհաճեցէ՛ք յայտնել խմբագրութեանը ձեր խիստկան աղգանունը:

ՄԱՐՏԵԼ. Գ. Կ. Շատ շնորհակալ ենք հեռագրի համար: Տպեցինք:

ԲԱՌՈՒՄ. Ս. Ս. Շնորհակալութիւն հեռագրի համար, որը և տպեցինք: Բայց մանրամասն ներկայագրութիւնը ուշացած կարելի է համարել, քանի որ այդ բոլորը յայտնի է արդէն ընթերցողին շուրջ ջոկ լուրերից:

ՐՈՍՏՈՎ (Դոնի վրա). Յովհ. Տէր-Յարութիւնեանց. «Մշակի» բոլոր համարները վաղուց ուղարկված են ձեզ և չենք հասկանում ի՞նչ պատճառով միայն № 1, 3 և 5 ստացած էք, իսկ միւսները ոչ: Տեղեկացէ՛ք Բոստոյի փոստատանը: Ներկայանալի փոստի անկարգութիւնիցն է: Մենք այստեղ էլ կը տեղեկանանք, թէ և դիտենք որ բոլորը ուղարկված է:

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՄՈՆԻՏ

ԹԻՖԼԻՍԻ ԳԱՂԱՔԱՅԻՆ ԱՐՀԵՍՏԱՌՈՐԱՑ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԱՐԵԼԻՆԻՆԻ յայտնում է, որ վերոյիշեալ ուսումնարանի տարեկան ակադ. տոնախմբութիւնը լինելու է կիրակի, յունվարի 29-ին, ուստի խոնարհաբար խնդրում է այն անձանց, որոնք հետաքրքրվում են արհեստագիտութեան զրուցեամբ, պատուական իրանց ներկայութեամբ: Ահա կը սկսվի ցերեկայ 12 ժամին:

ՊԱՏՐԱՍ Ե ՏՊԱԳՐՈՒԹԱՆ ՀԱՄԱՐ

„ՏԱՆՏԻԿԻՆ ԵՒ ԽՈՀԱՆՈՑ“

Վերնագրով գիրք՝ կերակուրների, քաղցրաւենիքի և տնտեսական գիտելիքների հարուստ բովանդակութեամբ, պարունակում է իր մէջ 300 ի չափ քաղաքական կերակուրներ պատրաստելու եղանակ թէ ասիական և թէ եւրոպական: Գիրքը կը լինի բաւական մեծ գիրքով՝ 300 երեսաւ չափ:

Բացված է բաժանորդագրութիւն: Բաժանորդագիրն է 1 ռուբլի իսկ, տպագրելուց յետոյ կարժենայ 1 ռուբլի 50 կոպ:

Կարելի է գրվել բոլոր գրավաճառանոցներում, իսկ գրքի կազմողն պէտք է դիմել. Тифлисъ, Якову Меликъ-Бахтманцу, въ типографію Мартиросянца.

1—3

«ԱՂԻՒԻԻ» ՎԱՃԱՌԱՆՑՈՒՄ

Ճախվում է

ՀԱՆԳՈՒՑԵԱԼ ԿՈՄՍ ԼՈՌՈՒՄԻԼԻԳԵԱՆԻ

Գրաւոր մեծագիր պատկեր: Գիրք 30 կ., ճանապարհածախսով 40 կ., նոյնը բարակ-գրեանց թղթի վրա 15 կ. ճանապարհածախսով 20 կ.: Մանր դրամի փոխարէն կարելի է փոստի մարկաներ ուղարկել: Դիմել՝ Тифлисъ, редакция «Агдоуъ».

1—3

ԹԻՖԼԻՍԻ ԱՌԵՏԻՍԿԱՆ ՍԱՐՈՍՏԱՆ

Հրատարակում է Թիֆլիսի I և II զիլլիի վաճառականներին, ներկայ լինել ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻՆ, որը պիտի կայանայ յունվարի 29-ին, կիրակի օր, առաւօտեան 11 1/2 ժամին, Թիֆլիսի քաղաքային վարչութեան շինութեան մէջ: Այդ ժողովում պիտի քննվեն 1888 թվի ելեմուտքի հաշիւը, այլ և ուրիշ գործեր, որոնք վերաբերում են Թիֆլիսի առևտրական դասակարգին: Այդ ժողովում պէտք է ընտրվեն մի առևտրական ստարոստա և նրա ընկերները:

1—1

COMPAGNIE DES MESSAGERIES MARITIMES

PAQUEBOTS-POSTE FRANÇAIS.

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԽԱԳՆԱՑՈՒԹԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

(ՄԵՍՍԱՃՐԻ ՄԱՐԻՏԻՄ)

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԵԼԻ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձ Ուրբաթ, 3/15 փետրվարի, ԲԱԹՈՒՄԻՑ դուրս կը գնայ շոգենաւ TIGRE (ՏԻԳՐ), նաւապետ FABRE (ՖԱԲՐ), մանելով Կ. Պոլիս, Պորտ-Սաւոս և Լալակալ: Աճեցնանք՝ ԲԱԹՈՒՄԻՄ պ. Գ. ԵՍՄԵՆՃԻԷ, իսկ ԹԻՖԼԻՍԻՄ ԳԵՌԳ. ՀԵՋՈՒԲԵԱՆ ՀԵՋՈՒԲԵԱՆՑ:

2—2

ՇԵՐԱՄԻ ՍԵՐՄ

Պատրաստված է Պատերի սիտեմով, ստացված է Ֆրանսիայից. Փոխադր 50 ռուբլի, ճանապարհածախսով: Հասցէն. Գորի, Սիմոն Գուլշամբարովին:

2—3

ՄՐՍԿՎԱՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԿԱՆԴԻԴԱՏ ԸՆԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ, կամենում է ԴԱՍԵՐ տալ: Հասցէն՝ ՄՇԱԿԻ՝ խմբագրատանը՝ կարելի է իմանալ:

3—5

ՄԻ ՀԱՄԵՍ ՀԱՅ ԸՆՏԱՆԻՔ ԸՆԴՈՒՆՈՒՄ է գիշերօթիկ և կիսագիշերօթիկ 8-ից մինչև 13 տարեկան երեխաներ: Հարցնել Վանքի փոքր փողոց № 5:

8—10 (ե. 2.)

ВЪ ЖИРАРДОВСКОМЪ СКЛАДѢ

Тифлисъ, Дворцовая ул., КАРАВАНСАРАЙ БЫВШІЙ АРЦУНИ.

ԺԻՐԱՐԴԵԱՆ ՊԱՀԵՍ

Դիւրացօվայա փողոց ՆԱԽԻՆ ԱՐԾՐՈՒՆՈՒ քարավանատարում

Ստացված են

ՊԱՏՐԱՍ ԲԵՃԷՆՏԵՐ ամեն տեսակ չափերի

ԴՕՆԵԼԻ և ԼԵՑՏ

8—10 (2)

ԿՈՇԿԱԿԱՐԻ ԱՐՀԵՍՏԱՆՈՑ

ԱՂԱՍԻ ՏԵՐ-ՋԱԲԱՐԵԱՆԻ

Գործվանկի, տուն Բէյտերի, № 11.



Ընդունում է կանանց և տղամարդոց ամեն տեսակ կոշիկներ՝ պատէրներ, ջութակներ, ԳՆԵՐՈՎ. պատրաստվում են չուտով: Պատէրները ընդունվում են խանութում. պատրաստելուց յետոյ կարելի է ստանալ միայն խանութում. տուն չէ ուղարկվում:

8—10

ԲԺԻՇԿ ՊՐԷՕԲՐԱԺԷՆԱԿԻ

Մասնաւորապէս բժշկում է էլէկտրականութեամբ, ֆարադէական և զալվանական հոսանքով ձուլքերի և ոտների անդամաւորութիւնի, բէլմախիւմից, ներկային հիւանդութիւններից և կոնսրվատուրայից (միանունների անդամաւորութիւն), բժշկում է կոլերին և խուրին անդամաւորութիւնից և նոյնպէս ընդունում է կանացի հիւանդութիւններով և սիֆիլիսով տկարներին: Հիւանդների ընդունելութիւնը ամեն օր, առաւօտեան 9 ժամից մինչև 12 ժամ և երեկոյեան 7 ժամից մինչև 8 ժամ, Միքայէլեան փողոցում, Բէլկանովի տանը, № 103:

9—10